

ուսանողներն եւ ա(ստուա)ծային բազմապատիկ ա(ւր)հ(ն)ութի(ւ)ն ի վ(ե)ր(այ) տիրապահ եւ ք(րիստոս)ախնամ ա(ւր)հ(ն)եալ քաղաքիդ թաւրիղոյ եղեալ, Գահանայից, Գօլգոթայի թաւրաց, եւ առհասարակ ամ(ենայն) ժողովրդականաց մեծի եւ փոքու ամենեցունց խնդալ ի տ(էր) միշտ յարադուարճ բերկրութ(եամբ) ընդ երկնաւորս:»

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութի(ւն) յա(ստուծո)յ հօրէ ամենակալէ եւ ի ա(աւ)նէ մերմէ յ(խոսու)է ք(րիստոս)է, եւ ի հոգոյն սրբոյ կենարարէ եւ մարդասիրէ ամէն:»

«Ա(ւր)հ(ն)ութի(ւն) հօր, պահպանութի(ւն) որդւոյ եւ նախախնամութի(ւն) ամենաս(ուր)բ հոգոյն միշտ եւ հանապազ ի վ(ե)ր(այ) ձեզ լիցի, եւ տ(էր) ա(ստուա)ծ մեր փրկեսցէ զձեզ ամ(ենայն) փորձութենէ հոգոյ եւ մարմնոյ եւ ամ(ենայն) պատրանաց թշնամեաց:»

«Եւ ընդ ա(ւր)հ(ն)ութե(նե)ս ծաներուք հոգեւոր որդիք մերս լուսոյ ս(ուր)բ էջմիածնի, այդ Բարսեղ անուանեալ վ(ա)րդ(ա)յ(ե)տդ այլանդակ տաղանդով ընառեալ է ի մէջ ա(ւր)հ(ն)եալ քաղաքիդ, եւ օրըստօրէ արծարծեալ եւ սակաւ սակաւ առաջ բերէ իւր մթերեալ չարիքն եւ սերմանէ չար որոմըն ի մէջ բարեպաշտ եւ միամիտ ժողովրդեանդ, հոգեւոր տէրն զդայ ընդ բանիւ է արարեալ չարաչար կապանօք, հանդերձ իւր ընդունողքն, որ այլ հրաման չունի այդ քաղաքումդ կենալ, մեք մինչեւ ցայժմս ներեցաք դմա որ իւր երեսի ջրօքն դուրս եղնի տեղէդ դնայ իւր բանն, այլ դայ յամառեալ եւ յանդգնեալ ըստ հրամանի հոգեւոր տիրին, ինքնագլուխ ընակէ ի քաղաքիդ եւ չար աղանդով լցուցանէ եւ սերմանէ զհոգիս ընդունողաց իւրոց:»

Դ(ա)րձ(եա)լ ոմանք մ(ա)րդիք կանկեալ են եւ կամեցեալ թէ դուրս անն տեղէդ, եւ ոմանք խմորեալք նորին չար աղանդովն ընդիմացեալ են հր(ա)մ(ա)նի հոգեւոր տիրին, ընդունե(ա)լ են ի յարկըս իւրեանց եւ չեն թողե(ա)լ դուրս լինելոյ, ահա զրեմ ձեզ պատուիրեմ ի հասանել թղթոյս առ ձեզ միաբանութ(եամբ)ր կանկեցէք ամ(ենե)քեանն դուրս արարէք ա(ւր)հ(ն)եալ քաղաքէդ եւ վարեցէք, ուր կամի դնալ թող դնայ, այլ հր(ա)ման չունի տեղդ կենալոյ, եթէ ոք յանդգնի հր(ա)մ(ա)ն(ա)յ հոգեւոր տիրի եւ մեր այնպիսիքն չարաչար բանադրեալք են եւ կապեալք հոգով եւ մարմնով յերկրէս մինչեւ ի յերկինս բարձր հրամանաւ մեծագահ ս(ուր)բ աթոռոյս էջմիածնայ:»

«Ով ոք որ զնա ընդունէ եւ ընդ նմա խօսակց(ո)ւթի(ւ)ն եւ կամ երթեւեկս առնէ այնպիսիքն այս բանադրանացս կըցորդ են եւ պատժոյս հաղորդ: Եթէ ս(ուր)բ էջմիածն(ա)յ եւ հոգեւոր տիրի եւ մեր ա(ւր)հ(ն)ութի(ւն) կամիք վարեցէք զդայ ի քաղաքէդ եւ խորչեցէք ի դմանէ ո(ր)ւ(է)ս ի թունաւոր դազանէ: Իսկ թէ ինքն եւ կամ իւր ընդունողքն ընդիմացողք լինին բանից մերոց, չար(ա)չար բանադրանք եւ դառնութի(ւն) կրելոց են ի մէջ եւ ի վեհէն: Նաեւ Բէկլար բէկուսն արգ (աղբոս) կանեմ եւ մ(ա)րդ ուղ(ա)րկեմ բերել կտամ տեղս ինքն եւ թէ իւր համախոյրքն բէտնամ կանեմ եւ աշխ(ա)րհիս մէջն առակ: Հ(ա)լ(ա) թէ հ(ա)լ(ա)թ դուրս ար(ա)րէք փութով քաղաքիդ:

Կ(ա)մ(ա)րդք հր(ա)մ(ա)ն(ա)յ մերոց ա(ւր) հնին ա(ստուծո)յ եւ ամ(ենայն) սրբոց ն(ո)ր(ա) եւ ի մէջ ա(մէն) Մայիս ամսոյ Իէ (27) դր(ե)ց(ա)ւ:» (Թուական չկայ սակայն անտարակոյս 1679 պէտք է ըլլայ:)

(Հաւատոյ Տարածման Ժողովի դեւան, Cong. Arm. V. III.F. 239R.)

Միքայէլ վարդապետի նամակին նման զօրաւոր նամակ մը եւս կը դանենք նոյն գիւանին մէջ եւ հոս կ'արտադրենք որեւէ տարակոյս չթողու համար թէ ինչո՞ւ Յակոբ Ջուղայեցի այնքան բուռն կերպով Հոռոմէադաւան Բարսեղ վարդապետը կը հալածէր:

«Յ(խոսու)ի ծառայ. Գաւթ վ(ա)յ(ե)տ յորմէ ժամանեալ հասցէ գիր ա(ւր)հնութե(ան), եւ նամակ պահպանութեան, շնորս առաքելական եւ ա(ստուա)ծային բազմապատիկ ա(ւր)հնութի(ւն) ի վերայ ջուղայոյ հասարակ վաճառականաց, բարեպաշտօն քրիստո-